ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

EIMC N 16-1/15
Տարեկան 2015

ՀԱՅԷԿՈՄՈՆԻՏՈՐԻՆԳ

(ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ)

ՀՀ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

- ՕԴԱՅԻՆ ԱՎԱԶԱՆ
- ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՏԵՂՈՒՄՆԵՐ
- ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐ

Բովանդակություն

ՕԴԱՅԻՆ ԱՎԱԶԱՆ 4

Երևան 4

Գյումրի 8

Վանաձոր 9

Ալավերդի 11

Հրազդան 14

Արարատ 17

Պասիվ նմուշառիչներով մթնոլորտային օդի դիտարկումները հանրապետության տարբեր բնակավայրերում 18

ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐ 19

Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք 26

Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածք 27

Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք 27

Սևանի ջրավազանային կառավարման տարածք 28

Արարատյան ջրավազանային կառավարման տարածք 28

Հարավային ջրավազանային կառավարման տարածք 28

ՀՀ ջրամբարների ջրի քիմիական որակը 2015թ.-ին 30

Արաքս գետ 33

Սևանա լիճ 37

«Եվրոպայի մեծ հեռավորությունների վրա անդրսահմանային աղտոտիչների տարածման դիտարկումների և գնահատման համատեղ ծրագիր (EMEP)» 56

Մթնոլորտային օդում որոշվող ցուցանիշների ցանկ 58

Մակերևութային ջրերում որոշվող ցուցանիշների ցանկ 58

Տեղումներում որոշվող ցուցանիշների ցանկ 59

Մթնոլորտային օդում որոշ աղտոտիչների սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները 60

Էկոլոգիական նորմեր 61

Մակերևութային ջրերի աղտոտվածության չափանիշներ 62

«Արտակարգ բարձր աղտոտվածություն» և «բարձր աղտոտվածություն» արտահայտությունների սահմանումը 63

ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ ԵՎ
ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴԻ ՈՐԱԿԻ
ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԴԻՏԱՑԱՆՑԸ
ՄԱՍՇՏԱԲ 1 : 1 350 000
Բնակավայրեր, որտեղ իրականացվում է մթնոլորտային օդի գետնամերձ շերտի մոնիտորինգ
Մարզկենտրոններ
Քաղաքներ
Մակերևութային ջրերի մոնիտորինգի դիտակետերն ու համարները
28 գետերի
129 լճերի և ջրամբարների

ՕԴԱՅԻՆ ԱՎԱԶԱՆ

2015 թվականի ընթացքում օդային ավազանի որակի դիտարկումներ կատարվել են հանրապետության Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Կապան, Քաջարան, Չարենցավան, Մարտունի* քաղաքներում և Սյունիք գյուղական համայնքում: Ընդհանուր առմամբ վերը թվարկված բնակավայրերում գործել է պասիվ նմուշառման 220 դիտակետ և 16 ստացիոնար դիտակայան, որոնցից 6 ստացիոնար դիտակայանում (Երևան և Ալավերդի քաղաքներում) կատարվել են շուրջօրյա ավտոմատ դիտարկումներ:

Գործող 16 դիտակայանի միջոցով ակտիվ եղանակով վերցված օդի 16580 փորձանմուշում որոշվել են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և գետնամերձ օզոնի պարունակությունները: Երևան քաղաքի փոշու որոշ փորձանմուշներում որոշվել է 21 մետաղի պարունակությունները: Հանրապետության 11 քաղաքում տեղադրված պասիվ նմուշառման 220 դիտակետից ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօսիդի պարունակությունները որոշելու համար վերցվել է օդի 20144 փորձանմուշ: Երևան և Ալավերդի քաղաքներում տեղադրված կայաններում ավտոմատ դիտակայանների միջոցով ածխածնի մոնօքսիդի, ծծմբի երկօքսիդի և ազոտի օքսիդների պարունակությունները որոշելու համար կատարվել է համապատասխանաբար 341051 և 110409 դիտարկում:

Հիմնական ծրագրի շրջանակներում ընդհանուր առմամբ վերցվել է օդի 488184 փորձանմուշ, որոշվել՝ 490928 ցուցանիշ:

Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Կապան, Քաջարան, Չարենցավան, Մարտունի, Ծաղկաձոր քաղաքների և Սյունիք գյուղական համայնքի մթնոլորտում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական և միջին շաբաթական կոնցենտրացիաների բաշխվածության քարտեզներն՝ ըստ պասիվ նմուշառիչների տվյալների, հասանելի են ***http://www.armmonitoring.am/*** ինտերնետային կայքում:

Երևան

2015 թվականին Երևան քաղաքում կատարվել են ընդհանուր փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործել է պասիվ նմուշառման 45 դիտակետ և յոթ դիտակայան (№1, №2, №7, №8, №16-1 №18 և №19), որից երկուսում՝ №2 և №18 կատարվել են միայն ակտիվ (24-ժամյա), իսկ մնացած հինգ դիտակայանում (№1, №7, №8, №16-1 և №19)՝ ինչպես ակտիվ, այնպես էլ ավտոմատ դիտարկումներ:

2015 թվականի ընթացքում Երևանում ակտիվ նմուշառմամբ վերցվել է օդի 9217, պասիվ նմուշառմամբ՝ 4196 փորձանմուշ, ավտոմատ եղանակով կատարվել է 341051 դիտարկում: Ածխածնի մոնօքսիդի տարվա առավելագույն կոնցենտրացիան դիտվել է դեկտեմբերի 22-ին ժամը 19^{00}-ին՝ 11.7 մգ/մ^3 (Արաբկիր համայնք), ծծմբի երկօքիդինը՝ մարտի 4-ին ժամը 13^{40}-ին՝ 2.5 մգ/մ^3 (Կենտրոն համայնք):

Որոշված ցուցանիշների միջին տարեկան կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները (ՍԹԿ):

* Մարտունի քաղաքում դիտարկումներ իրականացվել են 2015թ.-ի ապրիլից մինչև հոկտեմբեր ամիսների ընթացքում

Ակտիվ նմուշառման եղանակով դիտարկումների արդյունքները Երևանում.

Որոշվող միացություն (դիտակայանի քանակ)	Դիտարկված առավելագույն կոնցենտրացիա, մգ/մ³ (դիտակայանի համար)	ՍԹԿ-ից գերազանցումների քանակ		Միջին տարեկան կոնցենտրացիա, մգ/մ³	ՍԹԿ միջին օրական, մգ/մ³
		>1 ՍԹԿ	>5 ՍԹԿ		
Ծծմբի երկօքսիդ (7)	0.072 (դիտ. N1)	101	0	0.029	0.05
Ազոտի երկօքսիդ (7)	0.101 (դիտ. N18)	186	0	0.016	0.04
Փոշի (7)	1.548 (դիտ. N18)	301	26	0.103	0.15
Գետնամերձ օզոն (7)	0.043 (դիտ. N18)	3	0	0.007	0.03

Ավտոմատ սարքերի միջոցով որոշված նյութերի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները






Մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO_2) միջին տարեկան
կոնցենտրացիոն բաշխվածությունը (ըստ պասիվ նմուշառիչների տվյալների)
2015/ԵՐԵՎԱՆ
Պայմանանշաններ
ք. Երևանի սահմանագիծ
Լճեր և ջրամբարներ
Ճանապարհներ և փողոցներ
Երկաթգծեր
Գետային ցանց
Արդյունաբերական կետեր
ՊՆ դիտակետեր
Ակտիվ նմուշառման դիտակետեր
Ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մգ/մ3)
0.01
0.03
0.04
0.05
0.06
0.08
0 1 2 4 6 8 կմ
N
Ակունք
Ազատի ջրմբ.
Հրազդան
Երևանյան լիճ
Նորք-Մարաշ
Ողջաբերդ
Էրեբունի
Նուբարաշեն
Աղբավայր
Նաիրիտ գործարան
Գետառ
Գեստառ
Ավան
Նոր Նորք
Սենդի արդյունաբերություն
Արարկիր
Գեներոն
Մալաթիա-Սեբաստիա
Աջափնյակ
Քիմիական արդյունաբերութ.
Դավթաշեն
Հէկ


Մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի(NO_2) միջին տարեկան կոնցենտրացիոն բաշխվածությունը (ըստ պասիվ նմուշառիչների տվյալների)
2015/ ԵՐԵՎԱՆ
Պայմանանշաններ
ք. Երևանի սահմանագիծ
Լճեր և ջրամբարներ
Ճանապարհներ և փողոցներ
Երկաթգծեր
Գետային ցանց
Արդյունաբերական կետեր
ՊՆ դիտակետեր
Ակտիվ նմուշառման դիտակետեր
Ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մգ/մ3)
0.01
0.03
0.04
0.05
0.06
0.08
0 1 2 4 6 8 կմ
N
Ազատի ջրմբ.
Հրազդան
Երևանյան լիճ
Նոր Նորք
Նորք-Մարաշ
Ողջաբերդ
Էրեբունի
Նուբարաշեն
Աղբավայր
Նաիրիտ գործարան
Ճենգավիթ
Մալաթիա-Սեբաստիա
Կենտրոն
Արաբկիր
Ավան
Դավթաշեն
Աջափնյակ
Քիմիական արդյունաբերութ.
Սևանի արդյունաբերություն
ՀԷԿ

Գյումրի

2015 թվականին Գյումրի քաղաքում կատարվել են ընդհանուր փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործել է ակտիվ նմուշառման մեկ դիտակայան և պասիվ նմուշառման 24 դիտակետ:

Ակտիվ (24-ժամյա) նմուշառմամբ վերցվել է օդի 281, իսկ պասիվ նմուշառմամբ՝ 2493 փորձանմուշ:

Ծծմբի երկօքսիդի և փոշու միջին տարեկան կոնցենտրացիաները գերազանցել են համապատասխան ՍԹԿ-ները 1.6 և 1.9 անգամ: Ազոտի երկօքսիդի միջին տարեկան կոնցենտրացիան ՍԹԿ-ն չի գերազանցել:



Վանաձոր

Վանաձոր քաղաքում կատարվել են ընդհանուր փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: 2015 թվականին քաղաքում գործել է ակտիվ նմուշառման երեք դիտակայան և պասիվ նմուշառման 24 դիտակետ:

Ակտիվ (24-ժամյա) նմուշառմամբ վերցվել է օդի 3130, պասիվ նմուշառմամբ՝ 2490 փորձանմուշ:

Ծծմբի երկօքսիդի միջին տարեկան կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 1.5 անգամ: Ազոտի երկօքսիդի և փոշու միջին տարեկան կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:



Ակտիվ նմուշառման եղանակով դիտարկումների արդյունքները Վանաձորում.

Որոշվող միացություն (դիտակայանի քանակ)	Դիտարկված առավելագույն կոնցենտրացիա, մգ/մ³ (դիտակայանի համար)		ՍԹԿ-ից գերազանցումների քանակ		Միջին տարեկան կոնցենտրացիա, մգ/մ³	ՍԹԿ միջին օրական, մգ/մ³
			>1 ՍԹԿ	>5 ՍԹԿ		
Ծծմբի երկօքսիդ (3)	0.079	(դիտ. N3)	14	0	0.011	0.05
Ազոտի երկօքսիդ (3)	0.042	(դիտ. N2)	5	0	0.013	0.04
Փոշի (3)	0.384	(դիտ. N3)	7	0	0.055	0.15

Շուրջօրյա ակտիվ (24- ժամյա) նմուշառման եղանակով որոշված նյութերի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.





Ալավերդի

2015 թվականի ընթացքում Ալավերդի քաղաքում կատարվել են ընդհանուր փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների և ածխածնի մոնօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործել է ակտիվ նմուշառման երեք դիտակայան և պասիվ նմուշառման 38 դիտակետ:

Ակտիվ (24-ժամյա) նմուշառմամբ վերցվել է օդի 2552, պասիվ նմուշառմամբ՝ 3879 փորձանմուշ, ավտոմատ դիտարկումների կայանում կատարվել է 110409 դիտարկում:

Ածխածնի մոնօքսիդի տարվա առավելագույն կոնցենտրացիան դիտվել է ապրիլի 7-ին ժամը 0^{15}-ին՝ 5.17 մգ/մ^3, ազոտի մոնօքսիդինը՝ մարտի 2-ին ժամը 16^{00}-ին՝ 0.099 մգ/մ^3, ազոտի երկօքսիդինը՝ մայիսի 30-ին ժամը 20^{00}-ին՝ 0.152 մգ/մ^3

Ծծմբի երկօքսիդի միջին տարեկան կոնցենտրացիան գերազանցել է ՍԹԿ-ն 1.9 անգամ: Որոշված մյուս ցուցանիշների միջին տարեկան կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

Ակտիվ նմուշառման եղանակով դիտարկումների արդյունքները Ալավերդի քաղաքում.

Որոշվող միացություն (դիտակայանի քանակ)	Դիտարկված առավելագույն կոնցենտրացիա, մգ/մ^3 (դիտակայանի համար)	ՍԹԿ-ից գերազանցումների քանակ		Միջին տարեկան կոնցենտրացիա, մգ/մ^3	ՍԹԿ միջին օրական, մգ/մ^3
		>1 ՍԹԿ	>5 ՍԹԿ		
Ծծմբի երկօքսիդ (3)	0.122 (դիտ. N3)	58	1	0.019	0.05
Ազոտի երկօքսիդ (3)	0.178 (դիտ. N1)	8	0	0.010	0.04
Փոշի (2)	0.291 (դիտ. N2)	69	0	0.069	0.15


Մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO_2)
միջին տարեկան կոնցենտրացիոն բաշխվածությունը
(ըստ պասիվ նմուշառիչների տվյալների)
2 0 1 5/ ԱԼԱՎԵՐԴԻ
N
Ախթալա
Աղստև
Կամենկատուն
Ալավերդի
Դիլեգ
Արդի
Վերին
Ստեփ
Ֆանդի
Ա 3
0 0.6 1.2 2.4 3.6 4.8 կմ
Պայմանանշաններ
Գետային ցանց
Ճանապարհներ և փողոցներ
Միջպետական ճանապարհ
Երկաթգծեր
Բնակավայրերի սահման
Պասիվ նմուշառման դիտակետեր
Ակտիվ նմուշառման դիտակետեր
Ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մգ/մ³)
0.01
0.03
0.04
0.05
0.06
0.08


Մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի(NO_2)
միջին տարեկան կոնցենտրացիոն բաշխվածությունը
(ըստ պասիվ նմուշառիչների տվյալների)
2015/ ԱԼԱՎԵՐԴԻ
N
Պայմանանշաններ
Գետային ցանց
Ճանապարհներ և փողոցներ
Միջպետական ճանապարհ
Երկաթգծեր
Բնակավայրերի սահման
Պասիվ նմուշառման դիտակետեր
Ակտիվ նմուշառման դիտակետեր
Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մգ/մ^3)
0.005
0.02
0.03
0.04
0.05
0.07
0 0.6 1.2 2.4 3.6 4.8 կմ
Աքորի
Ալավերդի
Կաճաճակուտ
Դեբեդ
Հաղպատ
Ակներ
Հագվի
Ամոջ
Օձուն
M-6
H-25
H-35

Հրազդան

2015 թվականի ընթացքում Հրազդան քաղաքում կատարվել են ընդհանուր փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործել է ակտիվ նմուշառման մեկ դիտակայան և պասիվ նմուշառման 17 դիտակետ:

Ակտիվ (24-ժամյա) նմուշառմամբ վերցվել է օդի 1064, պասիվ նմուշառմամբ՝ 1743 փորձանմուշ:

Որոշված ցուցանիշների միջին տարեկան կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

Շուրջօրյա ակտիվ (24- ժամյա) նմուշառման եղանակով որոշված նյութերի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.






Մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO2) միջին տարեկան կոնցենտրացիոն բաշխվածությունը /ըստ պասիվ նմուշառիչների տվյալների/
2015/ՀՐԱԶԴԱՆ
N
Կաքավաձոր
Ջրառատ
Աթարբեկյան
Ծաղկաձոր
Մակրավան
Աղբյուրակ
Հրազդան
Քաղսի
Դայմանանշաններ
Բնակավայրերի սահման
Աղբյուրակ ջրամբար
Ճանապարհներ և փողոցներ
Գետային ցանց
Դիտակետեր
Ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մգ/մ3)
0.01
0.03
0.04
0.05
0.06
0.08
0 0.4 0.8 1.6 2.4 3.2
կմ


Մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2) միջին տարեկան կոնցենտրացիոն բաշխվածությունը /ըստ պասիվ նմուշառիչների տվյալների/
2015/ՀՐԱՉԴԱՆ
N
Կաքավաձոր
Զովասբեր
Մարմարիկ
Ջրառատ
Հրազդան
Ծաղկաձոր
Աթարբեկյան
Մակրավան
Աղբյուրակ
Հրազդան
Քարպի
Պայմանանշաններ
Բնակավայրերի սահման
Աղբյուրակ ջրամբար
Ճանապարհներ և փողոցներ
Գետային ցանց
Դիտակետեր
Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մգ/մ³)
0.005
0.02
0.03
0.04
0.05
0.07
0 0.4 0.8 1.6 2.4 3.2 կմ

Արարատ

2015 թվականի ընթացքում Արարատ քաղաքում կատարվել են ընդհանուր փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործել է ակտիվ նմուշառման մեկ դիտակայան և պասիվ նմուշառման 12 դիտակետ:

Ակտիվ (24-ժամյա) նմուշառմամբ վերցվել է օդի 336, պասիվ նմուշառմամբ՝ 1218 փորձանմուշ:

Որոշված ցուցանիշների միջին տարեկան կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:



Պասիվ նմուշառիչներով մթնոլորտային օդի դիտարկումները հանրապետության տարբեր բնակավայրերում

2015 թվականի ընթացքում պասիվ նմուշառիչներով օդային ավազանի դիտարկումներ կատարվել են հանրապետության Կապան, Քաջարան, Չարենցավան, Մարտունի քաղաքներում, Սյունիք գյուղական համայնքում: Վերցված օդի փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները:

Կապան քաղաքի 11 դիտակետում տեղադրված պասիվ նմուշառիչներով վերցվել է օդի 924 փորձանմուշ, Քաջարան քաղաքի 15 դիտակետից՝ 1256 փորձանմուշ, Չարենցավան քաղաքի 10 դիտակետից՝ 929 փորձանմուշ, Մարտունի քաղաքի 10 դիտակետից՝ 260 փորձանմուշ,Սյունիք (Սովխոզ) գյուղական համայնքի 9 դիտակետից՝ 756 փորձանմուշ:

Նշված բնակավայրերի մթնոլորտում որոշված ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին տարեկան կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

Ստորև տրվում են ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դեկտեմբեր ամսվա միջին ամսական կոնցենտրացիաների գրաֆիկական պատկերները՝ ըստ քաղաքների:





ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐ

2015 թվականի ընթացքում Հայէկոմոնիտորինգի կողմից մակերևութային ջրերի որակի դիտարկումներ իրականացվել են հանրապետության 42 գետի, Արփա-Սևան թունելի, Արփիլճի, Ախուրյանի, Ապարանի, Ազատի, Կեչուտի ջրամբարների և Երևանյան լճի 108 դիտակետում, որտեղից վերցվել է 1013 փորձանմուշ: Վերցված փորձանմուշներում որոշվել է միջին հաշվով 40 ցուցանիշ: Իրականացված դիտարկումների արդյունքները բերված են աղյուսակներ 1-3-ում:

ՀՀ կառավարության «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75-Ն որոշում) ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով: Եթե մակերևութային ջրային մարմնի որակի տարբեր ցուցանիշներ ընկնում են որակի տարբեր դասերի մեջ, ապա վերջնական դասակարգման մեջ հաշվի է առնվում վատագույնը: Օրինակ՝ եթե կոնկրետ ջրային մարմնի մեկ ցուցանիշ ցույց է տալիս «անբավարար» (4-րդ դաս) դասի կարգավիճակ, իսկ մնացած բոլորը ցույց են տալիս ավելի լավ կարգավիճակ, ապա այդ ջրային մարմինը դասակարգվում է «անբավարար» կարգավիճակի դասին (4-րդ դաս): Գործում է հետևյալ սկզբունքը. «Եթե մեկը վատ վիճակում է, ապա բոլորն են վատ վիճակում»:

ՀՀ գետերի ջրի քիմիական որակը 2015թ.-ին

Աղյուսակ 1.

Ջրավազա-նային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն/ դիտակետի համար	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրա-կան դաս
Հյուսիսային	Փամբակ	0.5 կմ գյ. Հարթագյուղից վերև (1)	_	2-րդ	2-րդ
		0.5 կմ ք. Սպիտակից ներքև (2)	Նիտրատ իոն, ԸԱԱ·	3-րդ	3-րդ
		0.6 կմ ք. Վանաձորից վերև (3)	Նիտրատ իոն	3-րդ	3-րդ
		4.5 կմ ք. Վանաձորից ներքև (4)	Նիտրիտ իոն, նիտրատ իոն, ֆոսֆատ իոն, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր, կախված մասնիկներ	3-րդ	5-րդ
			Ամոնիում իոն	5-րդ	

Ջրավազա-նային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն/ դիտակետի համար	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրա-կան դաս
Հյուսիսային	Դեբեդ	0.5 կմ Մարցիգետ գետի թափման կետից ներքև (5)	–	2-րդ	2-րդ
		0.5 կմ ք. Այրումից վերև (6)	Նիտրատ իոն, կախված մասնիկներ	3-րդ	4-րդ
			Մոլիբդեն	4-րդ	
		Սահմանի մոտ (7)	Նիտրատ իոն, կախված մասնիկներ	3-րդ	4-րդ
			Մոլիբդեն	4-րդ	
	Ձորագետ	0.5 կմ ք. Ստեփանավանից վերև (8)	–	2-րդ	2-րդ
		Գետաբերան (10)	–	2-րդ	2-րդ
	Տաշիր	0.5 կմ գյ. Միխայելովկայից վերև (11)	ԹՔՊ	3-րդ	3-րդ
		0.5 կմ գյ. Սարատովկայից ներքև (12)	ԹՔՊ, նիտրատ իոն	3-րդ	3-րդ
	Մարցիգետ	Գետաբերան (13)	ԹՔՊ	3-րդ	3-րդ
	Ախթալա	Գետաբերան (14)	Ամոնիում իոն, երկաթ, հանքայնացում	3-րդ	5-րդ
			Մոլիբդեն, կոբալտ, պղինձ	4-րդ	
			Ցինկ, կադմիում, մանգան, սուլֆատ իոն, կախված մասնիկներ	5-րդ	
	Գարգառ	Ակունք (210)	–	2-րդ	2-րդ
		Գետաբերան (342)	ԹՔՊ, մոլիբդեն	3-րդ	3-րդ
	Շնող	Գետաբերան (343)	Մոլիբդեն, կախված մասնիկներ	5-րդ	5-րդ
	Աղստև	1.2 կմ ք. Դիլիջանից վերև(15)	–	2-րդ	2-րդ
		0.5 կմ ք. Դիլիջանից ներքև (16)	Ամոնիում իոն, կախված մասնիկներ	3-րդ	3-րդ
	Աղստև	1 կմ ք.Իջևանից վերև (17)	ԹՔՊ, ամոնիում իոն, կախված մասնիկներ	3-րդ	3-րդ
		Սահմանի մոտ (18)	ԹՔՊ, ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, կախված մասնիկներ	3-րդ	3-րդ
	Գետիկ	0.5 կմ ք. Ճամբարակից վերև (19)	–	2-րդ	2-րդ
		Գետաբերան (20)	–	2-րդ	2-րդ

Ջրավազա-նային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն/ դիտակետի համար	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրա-կան դաս
Ախուրյանի	Ախուրյան	0.5 կմ գյ. Ամասիայից վերև (31)	_	2-րդ	2-րդ
		1 կմ գյ. Ամասիայից ներքև (32)	Ֆոսֆատ իոն	3-րդ	3-րդ
		0.8 կմ ք. Գյումրիից վերև (33)	Ֆոսֆատ իոն	3-րդ	3-րդ
		5 կմ ք. Գյումրիից ներքև (34)	Նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, մոլիբդեն, կոբալտ, երկաթ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
			Ամոնիում իոն, կախված մասնիկներ	4-րդ	
		0.5 կմ գյ. Երվանդաշատից ներքև (35)	Կախված մասնիկներ	3-րդ	3-րդ
	Աշոցք	0.5 կմ գյ. Արտաշենից վերև (36)	_	2-րդ	2-րդ
		Գետաբերան (37)	ԹՔՊ, արսեն	3-րդ	3-րդ
	Կարկաչուն	Գետաբերան (38)	ԹՔՊ, ԸԱԱ, նիտրատ իոն, ընդհանուր ֆոսֆոր, կախված մասնիկներ	3-րդ	5-րդ
			ամոնիում իոն, ֆոսֆատ իոն	4-րդ	
			Նիտրիտ իոն	5-րդ	
	Մեծամոր	10 կմ ք. Վաղարշապատից հարավ (40)	ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն	3-րդ	3-րդ
		11 կմ ք. Վաղարշապատից հարավ-արևելք (41)	ԹՔՊ, ֆոսֆատ իոն, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
			Ամոնիում իոն, նիտրիտ իոն	4-րդ	
		0.5 կմ գյ. Ռանչպարից ներքև (42)	ԹՔՊ, նիտրիտ իոն, ամոնիում իոն	3-րդ	3-րդ
Հրազդանի	Քասախ	0.5 կմ ք. Ապարանից վերև (43)	_	2-րդ	2-րդ
		0.5 կմ ք. Ապարանից ներքև (44)	ԹՔՊ, ԸԱԱ, նիտրիտ իոն	3-րդ	5-րդ
			Ընդհանուր ֆոսֆոր, ֆոսֆատ իոն	4-րդ	
			Ամոնիում իոն	5-րդ	
		1 կմ ք. Աշտարակից վերև (45)	_	2-րդ	2-րդ
		3.5 կմ ք. Աշտարակից ներքև (46)	Ֆոսֆատ իոն	3-րդ	3-րդ
		Գետաբերան (47)	ԹՔՊ, նիտրատ իոն, ֆոսֆատ իոն, ԸԱԱ	3-րդ	3-րդ

Ջրավազա-նային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն/ դիտակետի համար	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրա-կան դաս
Հրազդանի	Գեղարոտ	0.5 կմ գյ. Արագածից վերև (48)	_	2-րդ	2-րդ
		Գետաբերան (49)	Նիտրիտ իոն	3-րդ	4-րդ
			Նիտրատ իոն, ԸԱԱ	4-րդ	
	Հախվերդ	0.5 կմ գյ. Փարպիից ներքև (50)	Ֆոսֆատ իոն	3-րդ	3-րդ
	Հրազդան	գյ. Գեղամավանի մոտ (51)	ԹՔՊ	3-րդ	3-րդ
		0.5 կմ գյ. Քաղսիից ներքև (52)	_	2-րդ	2-րդ
		0.5 կմ գյ. Արգելից ներքև (53)	_	2-րդ	2-րդ
		0.5 կմ Արզնի ՀԷԿ-ից ներքև (54)	Նիտրատ իոն	3-րդ	3-րդ
		գյ. Գեղանիստ (225)	ԹԿՊ$_5$, ԹՔՊ, լուծված թթվածին, մանգան	3-րդ	5-րդ
			Նիտրիտ իոն, նիտրատ իոն, ընդհանուր ֆոսֆոր	4-րդ	
			Ամոնիում իոն, ԸԱԱ, ֆոսֆատ իոն	5-րդ	
		6 կմ ք. Երևանից ներքև. գյ. Դարբնիկի մոտ (55)	Նիտրիտ իոն, նիտրատ իոն, կախված մասնիկներ	3-րդ	5-րդ
			ԹՔՊ, կոբալտ	4-րդ	
			Լուծված թթվածին, ԹԿՊ$_5$, ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, մանգան, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	5-րդ	
		Գետաբերան (56)	Նիտրատ իոն, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր, կախված մասնիկներ	3-րդ	4-րդ
			Ամոնիում իոն, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, մանգան	4-րդ	

Ջրավազա-նային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն/ դիտակետի համար	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրա-կան դաս
Հրազդանի	Գետառ	Գետաբերան (59)	Նիտրատ իոն, սուլֆատ իոն, մանգան	3-րդ	5-րդ
			ՔԱԱ	4-րդ	
			Ամոնիում իոն, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, ընդհանուր ֆոսֆոր	5-րդ	
	Մարմարիկ	0.5 կմ գյ. Հանքավանից վերև (57)	_	2-րդ	2-րդ
		Գետաբերան (58)	_	2-րդ	2-րդ
Սևանի	Ձկնագետ	0.5 կմ գյ. Սեմյոնովկաից վերև (60)	_	2-րդ	2-րդ
		Գետաբերան (61)	_	2-րդ	2-րդ
	Մասրիկ	0.5 կմ գյ. Վերին Շորժայից վերև (62)	_	2-րդ	2-րդ
		Գետաբերան (63)	Ֆոսֆատ իոն	3-րդ	3-րդ
	Սոթք	0.5 կմ հանքավայրից վերև (64)	_	2-րդ	2-րդ
		Գետաբերան (65)	_	2-րդ	2-րդ
	Կարճաղբյուր	0.5 կմ գյ. Աղբյուրաձորից վերև (66)	_	2-րդ	2-րդ
		Գետաբերան (67)	_	2-րդ	2-րդ
	Վարդենիս	0.5 կմ գյ. Վարդենիկից վերև (69)	_	2-րդ	2-րդ
		Գետաբերան (70)	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն	3-րդ	4-րդ
			Նիտրիտ իոն	4-րդ	
	Մարտունի	0.5 կմ գյ. Գեղհովիտից վերև (71)	_	2-րդ	2-րդ
		Գետաբերան (72)	Նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն	3-րդ	3-րդ
	Արգիճի	0.5 կմ գյ. Լեռնակերտից վերև (73)	_	2-րդ	2-րդ
		Գետաբերան (74)	_	2-րդ	2-րդ
	Ծակքար	Գետաբերան (75)	ԹՔՊ, ֆոսֆատ իոն	3-րդ	3-րդ
	Շողվակ	Գետաբերան (76)	_	2-րդ	2-րդ
	Գավառագետ	0.5 կմ գյ. Ծաղկավանից վերև (77)	_	2-րդ	2-րդ
		Գետաբերան (78)	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	3-րդ
Արարատյան	Վեդի	0.5 կմ գյ. Ուրցաձորից վերև (80)	_	2-րդ	2-րդ
		2 կմ ք. Արարատից ներքև (82)	Կախված մասնիկներ	3-րդ	3-րդ

Ջրավազա-նային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն/ դիտակետի համար	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրա-կան դաս
Արարատյան	Արփա	0.5 կմ ք. Ջերմուկից վերև (83)	_	2-րդ	2-րդ
		0.5 կմ ք. Վայքից վերև (84)	_	2-րդ	2-րդ
		0.5 կմ ք. Վայքից ներքև (85)	Մոլիբդեն	3-րդ	3-րդ
		0.5 կմ ք. Եղեգնաձորից վերև (86)	Մոլիբդեն	3-րդ	3-րդ
		0.5 կմ գյ. Արենիից ներքև (87)	Մոլիբդեն	3-րդ	3-րդ
	Եղեգիս	0.5 կմ գյ. Շատինից ներքև (88)	Մոլիբդեն	3-րդ	3-րդ
	Արփա-Սևան թունել	0.7 կմ գյ. Ծովինարից վերև (68)	ԹՔՊ, ֆոսֆատ իոն	3-րդ	3-րդ
Հարավային	Մեղրիգետ	0.5 կմ ք. Մեղրիից վերև (89)	_	2-րդ	2-րդ
		Գետաբերան (90)	Նիտրիտ իոն	3-րդ	3-րդ
	Ողջի	1.7 կմ ք. Քաջարանից վերև (91)	_	2-րդ	2-րդ
		1.8 կմ ք. Քաջարանից ներքև (92)	Նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, սուլֆատ իոն, մանգան, վանադիում, կոբալտ, երկաթ, ՔԱԱ	3-րդ	5-րդ
			Կախված մասնիկներ	4-րդ	
			Ամոնիում իոն, մոլիբդեն	5-րդ	
		0.8 կմ ք. Կապանից վերև (93)	Մոլիբդեն, վանադիում	3-րդ	3-րդ
		6.8 կմ ք. Կապանից ներքև (94)	Նիտրիտ իոն, ցինկ, մոլիբդեն, վանադիում, երկաթ	3-րդ	5-րդ
			Պղինձ, ալյումին	4-րդ	
			Մանգան, կոբալտ	5-րդ	
	Արծվանիկ	0.5 կմ պոչամբարից վերև (95)	_	2-րդ	2-րդ
		Գետաբերան (96)	Նիտրիտ իոն, ցինկ, կադմիում, երկաթ	3-րդ	5-րդ
			Ալյումին, սուլֆատ իոն, կախված մասնիկներ	4-րդ	
			Մոլիբդեն, մանգան, վանադիում, կոբալտ, ծարիր	5-րդ	
	Գեղի	0.5 կմ գյ. Աջաբաջից վերև (97)	_	2-րդ	2-րդ
		Գետաբերան (98)	Մոլիբդեն	3-րդ	3-րդ
	Որոտան	0.5 կմ գյ. Գորայքից վերև (99)	_	2-րդ	2-րդ
		1 կմ ք. Սիսիանից վերև (100)	_	2-րդ	2-րդ
		3 կմ ք. Սիսիանից ներքև (101)	_	2-րդ	2-րդ
		0.5 կմ գյ. Տաթև ՀԷԿ-ից ներքև (102)	_	2-րդ	2-րդ

Ջրավազա-նային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն/ դիտակետի համար	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրա-կան դաս
Հարավային	Սիսիան	0.5 կմ գյ. Արևիսից վերև (103)	_	2-րդ	2-րդ
		Գետաբերան (104)	Մոլիբդեն, մանգան	4-րդ	4-րդ
	Գորիսգետ	3 կմ ք. Գորիսից վերև (106)	_	2-րդ	2-րդ
		1.5 կմ ք. Գորիսից ներքև (107)	ԹՔՊ, նիտրատ իոն, մոլիբդեն, ԸԱԱ*	3-րդ	5-րդ
			Ընդհանուր ֆոսֆոր	4-րդ	
			Ամոնիում իոն, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն	5-րդ	

1 -րդ դաս՝ «գերազանց» քիմիական որակ, 2 -րդ դաս՝ «լավ» քիմիական որակ, 3 -րդ դաս՝ «միջակ» քիմիական որակ, 4 -րդ դաս՝ «անբավարար» քիմիական որակ, 5 -րդ դաս՝ «վատ» քիմիական որակ

* ԸԱԱ-ընդհանուր անօրգանական ազոտ

Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք

Փամբակ գետի ջրի քիմիական որակը գետի վերին հոսանքում՝ Հարթագյուղից վերև հատվածում, «լավ» է (2-րդ դաս), Սպիտակ քաղաքից ներքև և Վանաձոր քաղաքից վերև հատվածներում՝ «միջակ» (3-րդ դաս). Սպիտակ քաղաքից ներքև՝ պայմանավորված նիտրատ իոնով և ընդհանուր անօրգանական ազոտով, Վանաձոր քաղաքից վերև հատվածում՝ պայմանավորված նիտրատ իոնով: Փամբակ գետի ջրի քիմիական որակը Վանաձոր քաղաքից ներքև ընկած հատվածում՝ «վատ» է (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով:

Դեբեդ գետի՝ Մարցիգետ գետի թափման կետից ներքև հատվածում ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս): Դեբեդ գետի Այրումից վերև և սահմանի մոտ հատվածներում ջուրը «անբավարար» որակի է (4-րդ դաս)՝ պայմանավորված մոլիբդենով:

Ջորագետ գետի ջուրը ողջ հոսանքում «լավ» որակի է (2-րդ դաս):

Տաշիր գետի վերին և ստորին հոսանքում ջուրը «միջակ» որակի է (3-րդ դաս). Միխայելովկայից վերև հատվածում՝ պայմանավորված ԹՔՊ-ով, Սարատովկայից ներքև հատվածում՝ պայմանավորված ԹՔՊ-ով և նիտրատ իոնով:

Մարցիգետ գետի գետաբերանի հատվածում ջուրը «միջակ» որակի է (3-րդ դաս)՝ պայմանավորված ԹՔՊ-ով:

Ախթալա գետի գետաբերանի հատվածում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս)՝ պայմանավորված ցինկով, կադմիումով, մանգանով, սուլֆատ իոնով և կախված մասնիկներով:

Գարգառ գետի ջուրը ակունքում «լավ» որակի է (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝«միջակ» որակի (3-րդ դաս)՝ պայմանավորված ԹՔՊ-ով և մոլիբդենով:

Շնող գետի գետաբերանի հատվածում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս)՝ պայմանավորված մոլիբդենով և կախված մասնիկներով:

Աղստև գետի վերին հոսանքում՝ Դիլիջանից վերև հատվածում, ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս), իսկ Դիլիջանից ներքև, Իջևանից վերև և սահմանի մոտ հատվածներում՝ «միջակ» (3-րդ դաս). Դիլիջանից ներքև՝ պայմանավորված ամոնիում իոնով և կախված մասնիկներով, Իջևանից վերև՝պայմանավորված ԹՔՊ-ով, ամոնիում իոնով և կախված մասնիկներով, սահմանի մոտ՝ պայմանավորված ԹՔՊ-ով, ամոնիում և ֆոսֆատ իոններով, կախված մասնիկներով:

Գետիկ գետի ջուրը ողջ հոսանքում «լավ» որակի է (2 -րդ դաս):

Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածք

Ախուրյան գետի Ամասիայից վերև հատվածում ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս), Ամասիայից ներքև և Գյումրիից վերև հատվածներում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ֆոսֆատ իոնով: Ախուրյան գետի ջրի քիմիական որակը Գյումրիից ներքև հատվածում՝ «անբավարար» է (4-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով և կախված մասնիկներով: Ախուրյան գետի Երվանդաշատից ներքև հատվածում ջուրը «միջակ» որակի է (3-րդ դաս)՝ պայմանավորված կախված մասնիկներով:

Աշոցք գետի Արտաշենից վերև հատվածում ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս), իսկ գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ԹՔՊ-ով և արսենով:

Կարկաչուն գետի գետաբերանի հատվածում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս)՝ պայմանավորված նիտրիտ իոնով:

Մեծամոր գետի Վաղարշապատից հարավ և Ռանչպար գյուղից ներքև ընկած հատվածներում ջուրը «միջակ» որակի է (3-րդ դաս). Վաղարշապատից հարավ՝ պայմանավորված ԹՔՊ-ով, ամոնիում, նիտրիտ և ֆոսֆատ իոններով, Ռանչպար գյուղից ներքև՝ պայմանավորված ԹՔՊ-ով, նիտրիտ և ամոնիում իոններով, Վաղարշապատից հարավ-արևելք հատվածում ջուրը «անբավարար» որակի է (4-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում և նիտրիտ իոններով:

Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք

Քասախ գետի Ապարան քաղաքից վերև և Աշտարակից վերև հատվածներում ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս), իսկ Ապարան քաղաքից ներքև ընկած հատվածում՝ «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնի պարունակությամբ: Աշտարակից ներքև և գետաբերանի հատվածներում ջուրը «միջակ» որակի է (3-րդ դաս). Աշտարակից ներքև՝ պայմանավորված ֆոսֆատ իոնով, գետաբերանի հատվածում՝ պայմանավորված ԹՔՊ-ով, նիտրատ և ֆոսֆատ իոններով, ընդհանուր անօրգանական ազոտով:

Գեղարոտ գետի Արագած գյուղից վերև հատվածում ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «անբավարար» որակի է (4 -րդ դաս)՝ պայմանավորված նիտրատ իոնով և ընդհանուր անօրգանական ազոտով:

Հախվերդ գետի Փարպի գյուղից ներքև հատվածում ջուրը «միջակ» որակի է (3 -րդ դաս)՝ պայմանավորված ֆոսֆատ իոնով:

Հրազդան գետի Քաղսի գյուղից ներքև և Արզել գյուղից ներքև հատվածներում ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս), Գեղամավանի մոտ և Արզնի ՀԷԿ-ից ներքև հատվածներում ջուրը «միջակ» որակի է (3-րդ դաս). Գեղամավանի մոտ հատվածում՝ պայմանավորված ԹՔՊ-ով, Արզնի ՀԷԿ-ից ներքև հատվածում՝ պայմանավորված նիտրատ իոնով: Գեղանիստ գյուղի մոտ և Երևանից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ հատվածներում Հրազդան գետի ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս). Գեղանիստ գյուղի մոտ՝ պայմանավորված ամոնիում իոնով, ընդհանուր անօրգանական ազոտով և ֆոսֆատ իոնով, Դարբնիկ գյուղի մոտ հատվածում՝ պայմանավորված լուծված թթվածնով, $БКП_5$-ով, ամոնիում և ֆոսֆատ իոններով, մանգանով, ընդհանուր անօրգանական ազոտով և ընդհանուր ֆոսֆորով, գետաբերանի հատվածում ջուրը «անբավարար» որակի է (4-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, նիտրիտ և ֆոսֆատ իոններով, մանգանով:

Գետառ գետի գետաբերանի հատվածում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, նիտրիտ և ֆոսֆատ իոններով, ընդհանուր ֆոսֆորով:

Մարմարիկ գետի ողջ հոսանքում ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս):

Սևանի ջրավազանային կառավարման տարածք

Մասրիկ գետի Վերին Շորժա գյուղից վերև հատվածում ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս), իսկ գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ֆոսֆատ իոնով:

Վարդենիս գետի վերին հոսանքում ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս), իսկ գետաբերանի հատվածում՝ «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված նիտրիտ իոնով:

Մարտունի գետի վերին հոսանքում ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս), իսկ գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված նիտրիտ և ֆոսֆատ իոններով:

Ծակքար գետի գետաբերանի հատվածում ջուրը «միջակ» որակի է (3-րդ դաս)՝ պայմանավորված ԹՔՊ-ով և ֆոսֆատ իոնով:

Գավառագետ գետի վերին հոսանքում՝ գյուղ Ծաղկավանից վերև հատվածում, ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս), իսկ գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում և ֆոսֆատ իոններով, ընդհանուր ֆոսֆորով:

Ձկնագետ, Կարճաղբյուր, Արգիճի, Շողվակ և Սոթք գետերի ջուրը «լավ» որակի է:

Արարատյան ջրավազանային կառավարման տարածք

Վեդի գետի Ուրցաձոր գյուղից վերև հատվածում ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս), իսկ Արարատից ներքև հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված կախված մասնիկներով:

Արփա գետի Ջերմուկից վերև և Վայքից վերև հատվածներում ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս), Վայքից ներքև, Եղեգնաձորից վերև և Արենիից ներքև հատվածներում՝ «միջակ» որակի է (3-րդ դաս)՝ պայմանավորված մոլիբդենով:

Եղեգիս գետի Շատին գյուղից ներքև ընկած հատվածում ջուրը «միջակ» որակի է (3-րդ դաս)՝ պայմանավորված մոլիբդենով:

Արփա-Սևան թունելի ջուրը «միջակ» որակի է (3-րդ դաս)՝ պայմանավորված ԹՔՊ-ով և ֆոսֆատ իոնով:

Հարավային ջրավազանային կառավարման տարածք

Ողջի գետի Քաջարան քաղաքից վերև ընկած հատվածում ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս), իսկ Քաջարանից ներքև և Կապանից ներքև ընկած հատվածներում՝ «վատ» (5-րդ դաս). Քաջարանից ներքև՝ պայմանավորված ամոնիում իոնով և մոլիբդենով, Կապանից ներքև՝ պայմանավորված մանգանով և կոբալտով, Կապանից վերև հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված մոլիբդենով և վանադիումով:

Արծվանիկ գետի վերին հոսանքում՝ պոչամբարից վերև հատվածում, ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս), իսկ գետաբերանի հատվածում՝ «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված մոլիբդենով, մանգանով, վանադիումով, կոբալտով և ծարիրով:

Գեղի գետի Աջաբաջ գյուղից վերև հատվածում ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս), իսկ գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված մոլիբդենով:

Որոտան գետի ողջ հոսանքում ջուրը «լավ» որակի է (2 -րդ դաս):

Սիսիան գետի Արևիս գյուղից վերև հատվածում ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս), իսկ գետաբերանի հատվածում՝ «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված մոլիբդենով և մանգանով:

Գորիսգետի վերին հոսանքում՝ Գորիս քաղաքից վերև հատվածում, ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս), իսկ Գորիսից ներքև հատվածում՝ «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, նիտրիտ և ֆոսֆատ իոններով:

Մեղրիգետի՝ Մեղրիից վերև հատվածում ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս), իսկ գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված նիտրիտ իոնով:

2015 թ-ին ՀՀ մակերևութային ջրերի քիմիական որակը

2015թ.-ին ՀՀ գետերի ջրի քիմիական որակի ամփոփ նկարագիրը
(դիտակետերի ընդհանուր թիվը 96 է)



ՀՀ ջրամբարների ջրի քիմիական որակը 2015թ.-ին

Աղյուսակ 2

Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրությունը/ Դիտակետի համարը	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դասը	Ջրի որակի ընդհանրական դասը
ՀՀ ջրամբարներ				
Արփիլճի ջրամբար	ամբարտակի մոտ (109)	ԹՔՊ	3-րդ	3-րդ
Ախուրյանի ջրամբար	ամբարտակի մոտ (110)	ԹՔՊ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	3-րդ
Ապարանի ջրամբար	ամբարտակի մոտ (111)	_	2-րդ	2-րդ
Երևանյան լիճ	ամբարտակի մոտ (112)	ԹՔՊ, ՔԱԱ, ամոնիում իոն, նիտրիտ իոն, նիտրատ իոն, ֆոսֆատ իոն, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	3-րդ
Ազատի ջրամբար	ամբարտակի մոտ(113)	ԹՔՊ	3-րդ	3-րդ
Կեչուտի ջրամբար	ամբարտակի մոտ (114)	_	2-րդ	2-րդ

ՀՀ ջրամբարների ջրի քիմիական որակի գնահատումը կատարվել է համաձայն ՀՀ մակերևութային ջրերի էկոլոգիական նորմերի (ՀՀ կառավարության 2011թ.-ի հունվարի 27-ի N 75-Ն որոշման հավելված N2):

Արաքս գետի քիմիական որակի մոնիտորինգի արդյունքները 2015թ.-ին

Աղյուսակ 3.

